

Եկեղեցածին Տաղանդը

ԴՊԿԸ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՒՔԵԱՆ

Լուսինէ Զաքարեանի մահը ես ապրեցի շուրջ 30 տարուայ ընկերութեան տարածութեան մէջ: Նրա կորուստը տեսայ հայ հողագործի ու խաչնարածի, հայ բանուորի ու գիտնականի, հայ հոգեւորականի ու աշխարհիկ մարդու, եկեղեցու խորանից մինչեւ հայ մազաղաթները եւ Հայաստանի ամենախուլ անկիւնից մինչեւ անծայրածիր տիեզերքը ձգուող շառաւիղի մէջ:

Այդ բարի, համեստ, թախծոտ, նրբակերտ ու քաղաքական պայքարից հեռու կանգնած աստղին ես հանդիպեցի գաղափարական թէժ պայքարի բովում, երբ, անգիտակցաբար, նա որոշիչ դերակատարներից մէկն էր դառնում մշակութային այն երկրաշարժին, որ նախորդեց Եղեռնի 50ամեակի տօնակատարութիւնը պաշտօնականացնելու համար մղուող ժողովրդական պայքարին:

60ական թուականների սկիզբն էր: Խրուշչովեան դարաշրջանի ծաղկուն տարիները: Կեանքն ընթանում էր իր սովորական հակասականութեամբ: Մի կողմից նկատելի էր խրուշչեան ձիւնահալլը եւ միւս կողմից՝ գաղափարական պայքարի սրուածութիւնը: Ժամանակաշրջանում տիրող գլխաւոր սկզբունքը՝ խաղաղ գոյակցութեան վարդապետութիւնը, ելնում էր այն տեսակէտից, որ պատերազմի վտանգի, ռազմական առճակատման բացակայութեան պայմաններում սրում է գաղափարախօսական պայքարը: Այդ հողի վրայ պոլշեւիկեան կուսակցութիւնը շեշտում էր անաստուածութեան քարոզչութեան նշանակութիւնը: Անսատուածութիւնը որպէս կրթական ծրագրի պարտադիր բաղադրամաս սկսեց դասաւանդուել դպրոցներում, համալսարաններում: Ուժեղացաւ գաղափարական պայքարը հաւատացեալների եւ եկեղեցի յաճախողների դէմ:

Այդ օրերին, երիտասարդութեան, յառաջապէս ուսանողութեան հոսքը գէպի եկեղեցի, մանաւանդ էջմիածնի Մայր Տաճարը, այնքան ուժեղացաւ,

որ սկսեց մտահոգել հանրապետութեան կուսակցական ղեկավարութեանը: Յանձնաժողովներ կազմուեցին, որպէսզի ուսումնասիրուի այդ «անակնկալ» երեւոյթի պատճառները: Անցկացուեցին կուսակցական խիստ ժողովներ: Պատժուեցին գաղափարական ճակատի որոշ աշխատողներ:

Շրջագայութեան մէջ մտան այդ երեւոյթը բացատրող երեք հիմնական տեսակէտներ: Մի խումբ ղեկավարներ այն բացատրեցին անցեալում թոյլ տրուած սխալներով: Ուրիշներ պատճառը որոնեցին խրուշչովեան ձիւնահալլ մէջ: Իսկ երիտասարդութիւնը ընդգծեց, որ ինքը էջմիածնին է գնում ըմբռչինելու համար հոգեպարար հայ եկեղեցական երաժշտութիւնը, որը սկսել էր կատարուել մասնագէտ երգիչների մասնակցութեամբ, մանաւանդ երաժշտանոցի ուսանողների, եւ բարձր վարպետութեամբ: Այդ կատարողների շարքում ի մասնաւոր շնչառաւուն հրաշանասոր ու ուսախօս ախալցիսացի մի աղջկայ անունը՝ Սվետլանա Զաքարեանի անունը:

Կուսակցական ղեկավարութեան բոլոր ջանքերը՝ երգիչներին արգիլելու ուղղութեամբ, ապարդիւն մնացին: Սպառնացին ուսանողներին զրկել թոշակից եւ նոյնիսկ հեռացնել երաժշտանոցից:

Սոյն շարժումը նոր իմաստ եւ ուժ տուեց այն պայքարին, որ հայ երաժշտասէր հասարակութիւնը մղում էր հայ հոգեւոր երաժշտութեան գաղափարիկան իրաւունք տալու համար: Նա, արդարացիօրէն, հարցնում էր, թէ ինչո՞ւ թոյլատրելի է հրապարակով երգել եւրոպացի տարբեր հեղինակների Ավէ Մարիանները, իսկ Սուլը Սուլը արգիլել արտաեկեղեցական կատարումների համար: Ժողովուրդը պահանջում էր, որ հայ հոգեւոր երաժշտութիւնը անբաժանելի մասը դառնայ կատարողական արուեստի եւ հայֆիլհարմոնիայի

երգացանկի:

Յաղթեց նոր մտածողութիւնը,
երիտասարդութիւնը: Շահեց հայ
երաժշտական արուեստը: Այդ պայ-
քարի բովում հայ հոգեւոր երա-
ժշտութիւնը զուաւ իր լաւագոյն
կատարողին, իր դրօշակակիրին՝
Լուսինէ Զաքարեանին: 30 տարի
շարունակ նա հայ հոգեւոր երգը
եւ դրա միջոցով հայ հաւատքն ու
եկեղեցական պատգամը տարածեց
աշխարհասփիւռ հայութեան եւ ողջ
մարդկութան մէջ:

Իր սիրոյ կուռքին անսահմանօրէն
նուրիրուած հմուտ գիտնական Խորէն
Պալեանը, քաջ գիտակցելով իր
կեանքի ընկերոջ պատմական առաքե-
լութեան ազգային եւ գեղագիտական
խորքը, ինքնազոհաբար իրեն վերա-
ծեց այնպիսի մի պատուանդանի,
որի վրայ բարձրացաւ Լուսինէի
անմահ կերպարը:

Երկու անուանափոխութիւն գրան-
ցուեց: Սվետլանա Զաքարեանը վե-
րանուանուեց ու դարձաւ Լուսինէ
Զաքարեան (սվետ բառը ուսւերէն
նշանակում է լոյս): Հայ եկեղեցական
երաժշտական գոհարներն սկսեցին
Համերգային ծրագրերում ժողովրդին
մատուցուել «Կրօնազերծուած» խո-
րագրով՝ որպէս հայ միջնադարեան
երաժշտութիւն:

Այդ օրերին էր, որ ես ծանօթա-
ցաք Կամփտապի պնուան երաժշտա-
նոցի սան Լուսինէ Զաքարեանին:
Նրա դէմքը անմիջապէս ինձ յիշեց-
րեց Պետրոս Դուրեանի «Նէ»
բանաստեղծութեան կերպարին.
Թէ կոյսն չըլլար

Սիրուն ու անրիծ,
ԶԱՍՏՈՒԱԾԻ այն երկնից
Մարդն ո՞ւր կը կարդար:

Յաճախակի անհատական շփումները
մեզ համոզեցին, որ Լուսինէն
ծնուած է շարականներ ու տաղեր
մեկնարաններու համար, եւ որ այդ
հոգեւոր երգերի իմաստը, նրանց
ձայնանիշները փորագրուած են նրա
հոգու խորքում եւ այնտեղից է
քիսում այն անմահական երաժշտու-
թիւնը, որը մի քանի վարկեանում
աղօթատեղի էր դարձնում տուեալ
վայրը: Լուսինէի ներաշխարհը
ինքը մի շարական էր: Նրա կեանքն

էլ մի պատարագ դարձաւ հայ եկե-
ղեցուն եւ ազգին համար:

Լուսինէն յաճախ էր իր ընկեր-
ների օճախները, այդ թուում նաեւ
մեր տունը, վերածում էր խորանի
ու ողջ ընկերներին բաժնեկից
դարձնում հայ աւանդական սրբու-
թիւնների ու գեղագիտական արքե-
ցումի: Տնային ջերմ ու անմիջա-
կան միջավայրում մենք աւելի
խորութեամբ ու զգացումով էինք
ընկալում նրա մեկնարանութիւննե-
րը, քան երբ նրան ունկնդում
էինք համերգային դաշիճներում
եւ մարդաշատ եկեղեցիներում:
Նախընտրում էինք սենեակը լուսա-
ւորել մոմերով: Մոմերի լոյսը
ինքնատիկ երանգ էր տալիս Լուսի-
նէի դէմքի միմիկային: Նրա ձայնը
ստանիւմ էր իւրայտուկ խորհրդա-
ւորութիւն, ինքնարուխ մի ուժ,
որը մեր հոգիները վեհացնելով
մօտեցնում էր Բարձրեալին: Մաք-
րուում էր մեր ներաշխարհը եւ
հարստանում մեր իմացութիւնը:
Այդ երգերը դառնում էին մեր
հոգու սաղմուսարաններն ու թարգ-
մանիչները: Նրանցով, հայ հոգեւոր
երգով, զարդարուած յաղթանակի
կամարով Լուսինէն մուտք գործեց
միջազգային երաժշտական յայտա-
գիր:

Լուսինէն, Խորէնը եւ ես յաճախ
էինք երեքով շրջում Հայաստանի
շրջանները՝ ժողովրդին լուսաւո-
րելու ու նրանից սովորելու
համար: Երբեմն գիշերում էինք
սարերի գլւին՝ խաչնարածների
վրաններում: Լուսինէն երգում
էր, Խորէնը բացատրում էր երգար-
ուեստը, իսկ ես՝ դասախոսում էի
հայագիտական ու հոգերանական
նիւթերի շուրջ: Գիւղացին ու
խաչնարածն իրեն շոյուած էր
գուամ՝ որ եւսինեկ տաբագու-
թեամբ մի երգչուհի իրեն այցի է
եկել: Խորէնը բացատրում էր, որ
Մեծն կոմիտասը իր երգերը
ժողովրդից է վերցրել, որ նա
գիւղ առ գիւղ ման է եկել ու
հաւաքել է հայ ժողովրդական
երգը: Այդպիսի պահերից մէկում,
տարեց մի կին քթի տակ սկսեց
մըթմըթալ մի մեղեղի: Խորէնը

անմիջապէս վեր ցատկեց եւ ուրախութեամբ փղաւեց.

- Քոյրիկ, այդ երգն աւելի բարձրածայն երգիր:

Կինը զարմացաւ: Ամաչեց: Ստիպեց մի քանի անգամ խնդրել: Վերջապէս երգեց: Երբ նա աւարտեց, Խորէնը սկսեց երգել: Նկատելի էր այդ երկու մեղեդիների ընդհանրութիւնը: Այդ օրինակի հիման վրայ Խորէնը խաչնարածներին հասկանալի դարձեց, թէ ինչպէս կոմիտասը ժողովրդի կատարմամբ լսած երգից կարողացել է դուրս բերել զուտ հայկականը, հայկական կորիզը ու այն մշակել: Այդ բացատրութիւնից յետոյ Լուսինէի կատարումները դառնում էին աւելի մատչելի ու հասկանալի:

Այսպէս, ինչպէս հայոց եկեղեցին

ծննդավայրն է հայու հոգու, այնպէս էլ Լուսինէ Զաքարեանի երաժշտական տաղանդը ծնունդն է հայ հոգեւոր կեանքի, հայ հոգեւոր երգարուեստի: Եկեղեցում ծնուած տաղանդը հրապարակ իջաւ ժողովրդական կամքի ուժով, ժողովրդի պահանջով եւ ժողովրդական ոգով: Աստուածային օրհնութեամբ եւ ժողովրդական թիկունքով Լուսինէ Զաքարեանը մի անգամից հասաւ համաշխարհային համբաւի, թէեւ օրուայ տէրերը նրան չնորհեցին իր արժանիքի նուազագոյնը: Այդպէս վարուեցին Պարոյր Սեւակի, Յովհաննէս Շիրազի եւ Մինաս Աւետիսեանի հետ: Այդ չորսի ընդհանրութիւնը շատ աւելի խորն ու արմատական է: